ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ
«ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

0010, ք.Երևան, Փ. Բուզանդի փ. 1/3 շենք, Երևանի քաղաքապետարանի 2-րդ մասնաշենք, էլ. փոստ: [illegible]

Ք. Երևան 18 մարտի 2025թ.

ՈՐՈՇՈՒՄ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԾԱԾԿԱԳԻՐ՝ ԿՇՄՊ-ԷԱՃԱՊՁԲ-25/12

«Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ (այսուհետ՝ Կազմակերպություն) կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԿՇՄՊ-ԷԱՃԱՊՁԲ-25/12 ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) հայտ է ներկայացրել Զվեր ՍՊԸ-ն/ՀՎՀՀ՝ 07620298, էլ. փոստ manukyan-annaa@mail.ru, հեռ. +37493819697 (այսուհետ՝ Մասնակից):

13.02.2025թ.-ին կայացած նիստում գնահատող հանձնաժողովը «Զվեր» ՍՊԸ-ին ճանաչել էր ընտրված մասնակից 4-րդ և 24-րդ չափաբաժինների մասով և անգործության ժամկետի ավարտից հետո օրենքով սահմանված կարգով 28.02.2025 թվականին մասնակցին ներկայացվել է պայմանագիր կնքելու, որակավորման և պայմանագրի ապահովումների ներկայացնելու առաջարկ, սակայն Մասնակցի կողմից օրենքով սահմանված ժամկետում՝ ծանուցումը ստանալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում 07.03.2025թվականը ներառյալ չի ներկայացվել ԿՇՄՊ-ԷԱՃԱՊՁԲ-25/12-3 ծածկագրով պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումները:

«Գնումների մասին» օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ գնման ընթացակարգի 4-րդ և 24-րդ չափաբաժինները հայտարարվել են չկայացած՝ համաձայն «Գնումների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» պարբերությունը, որոշում եմ՝ Զվեր սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՏՆՕՐԵՆ Ա. ԲԵԳՈՅԱՆ